Մամլո հաղորդագրություն

Հոկտեմբերի 17, 2022

ՔՈԱՖ-ի շրջանավարտների համար կմեկնարկի երկրորդ ամենամյա սթարթափ ծրագիրը

ԵՐԵՎԱՆ – Արդեն երկրորդ տարին անընդմեջ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) շրջանավարտների համար նախաձեռնել է սթարթափ ինկուբացիոն ծրագիր, որն այս տարի կիրականացվի հայ-ֆրանսիական բիզնես աքսելերատոր StartDoon-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը կյանքի է կոչվել «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի (HSBC Հայաստան), ինչպես նաև Zark նվիրատվությունների և Healthbird բժշկական ապահովագրության հավելվածների հովանավորությամբ:

Նախաձեռնությունը նպատակ ունի օգնել Հայաստանի գյուղաբնակ երիտասարդներին կյանքի կոչելու իրենց նորարարական ստարտափ գաղափարները կրթական տեխնոլոգիաների (EdTech), ֆինանսական տեխնոլոգիաների (FinTech), զբոսաշրջության, ագրարային տեխնոլոգիաների (Agritech) և կանաչ լուծումների (Green Solutions) ոլորտներում:

Հոկտեմբերի 14-ին ՔՈԱՖ-ի երևանյան գրասենյակում տեղի ունեցավ ծրագրի հանդիսավոր մեկնարկը, որտեղ ներկա էին վերջինիս շահառուները և գործընկերները: Միջոցառման ընթացքում ներկայացվեց այս տարվա ծրագիրը, որը բաղկացած կլինի 3 փուլերից:
Առաջին՝ նախաինկուբացիոն փուլով նախատեսվում է կազմակերպել 4-ամսյա դասընթացներ ավագ դպրոցի մոտ 150 աշակերտների համար ձեռնարկատիրական նախագծերին նախապատրաստվելու, ինչպես նաև հետագա սթարթափ ինկուբացիոն փուլում նրանց մասնակցությունը դյուրացնելու նպատակով: Երկրորդ փուլում կընդգրկվեն ՔՈԱՖ-ի 30 շրջանավարտ տարբեր մարզերից, որոնք կմասնակցեն ութշաբաթյա ինտենսիվ վերապատրաստման ծրագրին՝ հնարավորություն ստանալով վավերացնել տարբեր բիզնես գաղափարներ: Փուլը կավարտվի «փիչինգ» միջոցառմամբ, որի ընթացքում շրջանավարտներին կտրամադրվի 5-ական րոպե՝ իրենց գաղափարները սթարթափ փորձագետներից և ՔՈԱՖ-ի անձնակազմից կազմված ժյուրիին ներկայացնելու համար:
Մրցույթի արդյունքում կընտրվեն երեք հաղթող սթարթափներ, որոնց միջև կբաշխվի տասնհինգ հազար դոլարի ֆինանսավորումը, ինչը կուղղվի նրանց բիզնես նախաձեռնությունները սկսելուն: Ինկուբացիոն ծրագրի հաղթողներն իրենց տեղը կապահովեն նաև վերջին՝ նախաաքսելերացիոն փուլում: Փուլը նախատեսված է շուկա

դուրս գալու և աքսելերատորներին, ներդրումներին և եկամուտներին պատրաստվելու համար:

«Նախորդ տարվա պիլոտային ծրագրի արձանագրած հաջողությունը հերթական անգամ բացահայտեց Հայաստանի գյուղաբնակ երիտասարդների տաղանդն ու ներուժը: ՔՈԱՖ-ի Ծրջանավարտների սթարթափ ինկուբացիոն ծրագրի շնորհիվ երեք սթարթափ արդեն իսկ գտնվում են իրենց բնակավայրերում սեփական բիզնես սկսելու վաղ փուլում: ՔՈԱՖ-ը շարունակում է սերմանել և խթանել քաղաքացիական պատասխանատվության մշակույթը՝ խրախուսելով երիտասարդ շահառուներին իրենց համայնքներում ստանձնելու նորարարության և առաջընթացի շարժիչ ուժի դերը»,- մեկնաբանեց ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը:

Ծրագրի ողջ ընթացքում և դրանից հետո դիմորդներին կտրամադրվի ոլորտին առնչվող մասնագիտական խորհրդատվություն, ինչպես նաև շուկայի ռեսուրսների հասանելիություն, կապեր ստեղծելու հնարավորություններ և բիզնեսին վերաբերող համապարփակ դասընթացներ:

«Մարզերի կայուն զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը մեր բանկի ռազմավարական ուղղություններից մեկն է: Բարեկեցիկ կյանք ունենալու կարևոր նախապայմաններից է տեղում բնակվող երիտասարդների նախաձեռնողականությունը: Դա է պատճառը, որ մենք թե՛ ֆինանսապես և թե՛ մեր անմիջական մասնակցությամբ օժանդակում ենք այնպիսի ծրագրերին, որոնք հարթակ են ստեղծում մարզերում բնակվող երիտասարդների գիտելիքների ձեռքբերման և բիզնես գաղափարների իրագործման համար»,- նշեց HSBC Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն Իրինա Սեյլանյանը:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 66 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է *2018* թ. մայիսի *27*-ին*:*

***HSBC* Խումբ**

HSBC Holdings plc-ն՝ *HSBC* Խմբի ընկերության գլխամասը, գտնվում է Լոնդոնում*:* Խումբը ծառայություններ է տրամադրում *63* երկրներում և տարածաշրջաններում՝ Եվրոպայում, Ասիայում, Հյուսիսային և Լատինական Ամերիկայում, ինչպես նաև Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում*: HSBC*-ն հանդիսանում է աշխարհի ամենախոշոր ֆինանսական կառույցներից մեկը, որի ակտիվները *2022*թ. հունիսի *30*-ի դրությամբ կազմել են *2,985* միլիարդ ԱՄՆ դոլար*:*

***HSBC* Հայաստան**

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հիմնադրվել է *1996*թ.-ին: Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Խմբին ամբողջությամբ պատկանող դուստր ընկերություն է: Էյչ-Էս-Բի-Սի Հայաստանը սպասարկում է շուրջ *30 000* հաճախորդի Երևան քաղաքում գտնվող իր *6* գրասենյակի և մոտ *310* աշխատակցի միջոցով*: 2021* թ.-ի դեկտեմբերի *31*-ի դրությամբ բանկի ակտիվները կազմել են *261* միլիարդ ՀՀ դրամ՝ ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի Լոնդոնի կողմից Բանկի միջնորդությամբ տրամադրված վարկերը*:* Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: